

Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2015 թվականի նոյեմբերի 10-ի նիստում,
արձանագրություն N 2,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ.Լ.Աթոյան
«_____» _____ 2015 թ.

ԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԾՆՆԴՅԱՆ ԽՐԱԽՈՒՄԱՆ

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) աշխատողների ընտանիքները, մայրությունը, հայրությունը և մանկությունը հովանավորության, աջակցման և խրախուսման ներքո են: Սույն կարգի նպատակն է նյութապես աջակցել և խրախուսել նորաստեղծ ընտանիքներին և երեխաների ծնունդին:

2. Սույն կարգի ընդունման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության ընտանեկան և աշխատանքային օրենսգրքերը, համալսարանի ներքին կարգապահական կանոնները:

3. Սույն կարգով սահմանվում է համալսարանի կողմից հիմնական աշխատողների նորաստեղծ ընտանիքների նյութական աջակցման և երեխաների ծննդյան միանվագ նյութական խրախուսման ընթացակարգը:

4. Սույն կարգով նախատեսված նյութական աջակցման և խրախուսման միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու միջոցներից:

5. Սույն կարգը տարածվում է համալսարանի հիմնական հաստիքային աշխատողների վրա՝ անկախ զբաղեցրած պաշտոնից, համալսարանում աշխատանքային ստաժից և աշխատանքի ծավալից:

6. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

1) **նորաստեղծ ընտանիք**՝ համալսարանի աշխատող համարվող անձի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնությունը.

2) **նոր ծնված երեխա**՝ համալսարանի աշխատող համարվող անձի նոր ծնված երեխան, ում ծննդյան կապակցությամբ ծագել է խրախուսում ստանալու իրավունքը.

3) **դիմող**՝ նոր ծնված երեխայի հայրը կամ մայրը, ով համալսարանի աշխատող համարվող անձ է և ումից սերված լինելու փաստը որոշված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Նորաստեղծ ընտանիքների համար սահմանվում են նյութական աջակցման հետևյալ տեսակները.

1) համալսարանի աշխատողի կողմից նորաստեղծ ընտանիքի կազմում՝ 100.000 ՀՀ դրամ.

2) համալսարանի երկու աշխատակիցների կողմից նորաստեղծ համատեղ ընտանիքի կազմում՝ 250.000 ՀՀ դրամ:

7.1. Նյութական աջակցություն ստանալու համար դիմողն անձամբ համալսարանի անձնակազմի կառավարման բաժին է ներկայացնում՝

1) դիմում, որում ներառվում են՝

ա. դիմողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը, համալսարանում զբաղեցրած պաշտոնը,

բ. ամուսնության Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ-ում պետական գրանցման վկայականի (գրանցման

ժամկետը պետք է ունենա առնվազն 30 օրվա վաղեմություն) և ամուսինների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

8. Երեխայի ծննդյան համար սահմանվում են նյութական խրախուսման հետևյալ տեսակները.

- 1) առաջին երեխայի ծնվելու դեպքում՝ 100.000 ՀՀ դրամ.
- 2) երկրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 150.000 ՀՀ դրամ.
- 3) երրորդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 200.000 ՀՀ դրամ.
- 4) միաժամանակ մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում՝ 250.000 ՀՀ դրամ:

8.1. Նյութական խրախուսում ստանալու համար դիմողն անձամբ համալսարանի անձնակազմի կառավարման բաժին է ներկայացնում՝

- 1) դիմում, որում ներառվում են՝

ա. դիմողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը, համալսարանում զբաղեցրած պաշտոնը,

բ. նոր ծնված երեխայի (միաժամանակ մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում՝ նոր ծնված երեխաների) ծննդյան վկայականի (վկայականների) պատճենը, մյուս երեխայի (երեխաների) ծննդյան վկայականի (վկայականների) պատճենը:

9. Անձնակազմի կառավարման բաժին ներկայացված դիմումները գրանցվում են բաժնի կողմից վարվող գրանցամատյանում:

10. Անձնակազմի կառավարման բաժնի պետը ներկայացված դիմումները գրանցելուց հետո ներկայացնում է համալսարանի ռեկտորին՝ հետագա ընթացքի համար:

11. Նորաստեղծ ընտանիքների աջակցման և երեխաների ծննդյան միանվագ նյութական խրախուսման գումարները փոխանցվում են համալսարանի աշխատողի՝ դիմումատուի հաշվեհամարին:

12. Սույն կարգի դրույթները տարածվում են 2015 թվականի նոյեմբերի 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա: